ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար տնտեսական ապրանքներ և սանհիգենիկ միջոցներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 18 ապրիլի 2018թ.

Սույն թվականի ապրիլի 18-ին ժամը 10.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար տնտեսական ապրանքներ և սանհիգենիկ միջոցներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/06» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Էկոմիքս» ՍՊԸ-ի, «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ-ի, «Պրովայդեր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ բացառությամբ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանի և հաձնաժողովի անդամ՝ Ն. Ա. Կուտուզյանի, որոնք գտնվում են գործուղման մեջ:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրաված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ 1-ին, 2-րդ, 5-րդ, 8-րդ, 11-րդ, 20-րդ, 24-րդ, 31-րդ, 40-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Էկոմիքս» ՍՊԸ-ին:
- ✓ 3-րդ, 4-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 17-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ, 35-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ-ին:
- ✓ 6-րդ, 14-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 23-րդ, 25-րդ, 29-րդ, 32-րդ, 34-րդ, 36-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 45-րդ, 47-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Պրովայդեր» ՍՊԸ-ին:
- ✓ Առաջարկել «Էկոմիքս» ՍՊԸ-ին, «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ-ին, «Պրովայդեր» ՍՊԸ-ին հաստատել պայմանագրերի նախագծերը և ներկայացնել

պայմանագրերի ապահովում:

- ✓ Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար՝ Խ. Ժ. Սաֆարյան

հանձնաժողովի անդամ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձնաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան